# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

***Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ Երվանդ Եղիազարյանի 2024 թվականի ապրիլի 10-ի զեկուցագրերը, Սիսիան համայնքի և <<Շեն>> բարեգործական հասարակական կազմակերպության միջև կնքված հուշագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝***

1. 1890000 ՀՀ դրամ տեղափոխել 04.2.4 ծրագիր 5511 հոդված՝ Սիսիան համայնքի Դարբաս բնակավայրի ոռոգման համակարգի նորացման, խնայողական, կաթիլային համակարգի ներդրման ծրագրի շրջանակում, որպես համայնքի կողմից համաֆինանսավորում:

***Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ Երվանդ Եղիազարյանի 2024 թվականի ապրիլի 10-ի զեկուցագրերը, Սիսիան համայնքի և <<Միասին հանուն համայնքների զարգացման>> սոցիալական աջակցման ՀԿ-ի միջև կնքված հուշագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝***

1. 2100000 ՀՀ դրամ տեղափոխել 10.7.1 ծրագիր 5511 հոդված՝ Սիսիան համայնքում <<Կարիքավոր ընտանիքներից դեպի եկամուտների ինքնաբավություն>> ծրագրի շրջանակում գյուղատնտեսական աշխատանքների համար, որպես համայնքի կողմից համաֆինանսավորում:

***Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ Երվանդ Եղիազարյանի 2024 թվականի ապրիլի 10-ի զեկուցագրերը, Սիսիան համայնքի և Վորլդ Վիժն Հայաստան զարգացման բարեգործական միջազգային կազմակերպության միջև կնքված պայմանագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝***

1. 500000 ՀՀ դրամ տեղափոխել 09.1.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի Շաքի բնակավայրում գործող նախադպրոցական ուսումնական հաստատության խմբասենյակի ջեռուցման համակարգի տեղադրման աշխատանքների իրականացման համար, որպես համայնքի կողմից համաֆինանսավորում:

***Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ Վ. Թանգյանի 2024 թվականի ապրիլի 11-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝***

1. 140000 ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի Շենաթաղ և Բնունիս բնակավայրերի վարչական շենքերի սեյսմիկ խոցելիության աստիճանի գնահատման ծառայություններ ձեռքբերելու համար:
2. 70000 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.3 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի Լոր բնակավայրում գտնվող Համո Սահյանի տուն թանգարանի սեյսմիկ խոցելիության աստիճանի գնահատման ծառայություններ ձեռքբերելու համար:

***Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի և ՀՀ Սյունիքի մարզպետարանի միջև 2024 թվականի մարտի 1-ի կնքված դրամաշնորհի թիվ ՍՄ-ԴՄՀ-03/24 պայմանագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է հետևյալ գումարների պլանավորումը համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում.***

Սիսիան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող 1.5-5 տարեկան 269 (երկու հարյուր վաթսունինը) երեխաների նախադպրոցական կրթության ապահովման համար, որից՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմաններով վկայագրված 7 երեխաների համար և զինծառայող ծնողի, ռազմական գործողություններին մասնակցած ծնողի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի 262 երեխաների համար նախատեսվում է 09.1.1 ծրագիր

4511 հոդվածում ավելացնել 38022717 (երեսունութ միլիոն քսաներկու հազար յոթ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ, որն տրամադրվում է պետության կողմից և պլանավորվում է նաև վարչական բյուջեի /ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ/ եկամտային մասում, որից հետո ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների և Սիսիան համայնքի միջև կնքված սուբսիդիայի տրամադրման պայմանագրերում կկատարվեն համապատասխան ձևակերպումները՝ փոփոխությունները:

**Ֆինանսատնտեսական բաժնի պետ** **Դ. Այվազյան**

**11.04.2024թ.**

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան 38022717 (երեսունութ միլիոն քսաներկու հազար յոթ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամով:

**Ֆինանսատնտեսական բաժնի պետ** **Դ. Այվազյան**

**11.04.2024թ.**